

ՀԱՄԱԼՈՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

9 (= 91. 9 9) ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՎԵՐՋԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒՆ

(Պատկերազարդ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ




||ՏԻԳՐԱՆ Բ.||

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆ - 1917

Հրատարակութիւն Ա.

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ




ՅԱՌԱՋԱԲԱՆ

Անորոշութեան այս օրերուն հրատարակութեան տալով հետեւեալ տեղեկագիրը, մենք կը յուսանք գոնէ ազօտ լոյս մը սփոած ըլլալ այն ահաւոր խժդժութիւններու մասին՝ որոնց Ենթարկուեցան մեր արենակիցները վերջին քանի մը տարիներու ընթացքին։ Անկասկածօրէն ամէն անոնք որ կը կարդան այս տեղեկագիրը պիտի համակուին կսկիծի եւ զայրոյթի վառ զգացումներով։ Բայց որպէսզի այդ զգացումներն ունենան իրենց դրական արժէքը, անոնք սլէտք է արթնցնեն մեր մէջ պարտականութեան բարձր գիտակցութիւնը։ Եթէ մենք այս յայտնաբերուած ոճիրներու ուժգնութեան առնուազըն համահաւասար չափովը չ'աշխատինք դարմանել մեր զոյութեան ներկայ ալէտալի վիճակը՝ ալ ի՞նչ օգուտ մեր ցաւ ու ցասումէն։

Անգթօրէն խողխողուած ու մահացած մեր սիրելիներն այսօր իրենց ետին ձզած ևն ասսանդական եղկելիներու երկար շարան մը՝ որոնց պարտական ենք երկարել մեր եղբայրական փրկարար ձեռքը։ Կրնա՞նք վարանիլ։ Մենք կը հաւատանք որ այս տեղեկագրի ընթերցումէն յետոյ մեր հայրենակիցները պիտի զան ըսելու – ՈՉ, ՀԱԶԱՐ ԱՆԳԱՄ ՈՉ։


ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ



ԵՐԿՈՒ ԽՈՎՔ

Ներկայ իսկամառ տեղեկագիրը որ Տեգ-
րանակերտի տարագրական ջարդերու եւ հայաջինջ
վայրագութեանց մասին գրուած է, ականատեսի
պատմութիւններէ պատրաստուած է. ուր ի միջի
այլոց Տօնճեան Պրն. Թովմասը ինքն անձամբ իւր
տեսածները արձանագրած է: Յիշեալ պարոնը ըն-
դարձակ մանրամասնութիւններով եւ ոճրագործու-
թեանց թուականներով պատրաստած է ընդարձակ
տեղեկագիր մը, որը լոյս պիտի տեսնէ յարմար
առթիւ մը:

Luthur, 1 Uthuru 1919
P. O. Box 113



ՏԵԳՐԱԿԱՆԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱՐԱՐԱՆԸ ԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՎԵՐՋԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1914 Օգոստոս 3ին Երկուշաբթի օրը զօրաշարժի հրաման ազդարարուեցաւ։ Յաջորդ օրը Պատերազմական Ատեան կազմուելով սկսաւ զուլումներու շրջանը։ Թէֆլիֆ Հարպիյէ-յի անուան տակ յանձնաժողով մը կազմուեցաւ, որուն ղեկը Երկու իթթիհատական շէֆերու ձեռքն էր։ Ասոնց գործն եղաւ ամբողջ տարի մը, գիշեր ցորեկ, հայ վաճառականաց ապրանքները գրաւել, եւ հայ արհեստաւորները ձրիաբար գերիի նման անընդհատ աշխատցնել։ Անուններն են Իթթիհատի պատասխ. տնօրէն Արքար Հագգը եւ Իթթիհատի Միւրէխէս Ճարճիս աղա զատէ Քօն Եռւսուֆ։ 1919 Օգոստ. 19ի գիշերը տեղի ունեցաւ շուկայի ահոելի հրդեհը գոմսէր կավրանլի Զատէ Մեմտուհ Պէյի կողմանէ։

Հրդեհի շարժառիթը որոշ էր։ Իթթիհատներու կողմանէ կազմուած էր Ինքիպահ Շիրկէթի անուան տակ առեւտրական մի ընկերութիւն, հայերու հետ մրցելու եւ անպայման յաջողութիւն մը ձեռք բերելու համար։ Երեսփ. Ֆէյզի Պէյի խորհուրդով եւ Իթթիհատական Գոմիթէյի որոշումով ծրագրուած էր շուկային հրդեհը։ Երկու ժամուան մէջ 1100 խանութներ եւ Երկու խաներ մոխիր դարձան։ Հրդեհէն Երկու օր վերջ հասաւ Տիգրանակերտ նոր ընտրուած կուսակալ Համիտ Պէյը որուն առաջին գործն եղաւ շուկան հրդեհի տուող Գոմսէր Մէմտուհ Պէյը պաշ-

տօնանկել։ Իթթիհատի ազդեցութեան հետեւանօք, Մէմտուհի պաշտօնանկութիւնն ետ առնուեցաւ, միայն կուսակալի արժանապատութիւնն աւ չի վիրաւորելու համար, որոշուեցաւ Մէմտուհը միեւնոյն պաշտօնով Ատանա ղրկել։ Համիտ Պէյ պաշտօնավարեց 914 Օգոստ. 23էն մինչեւ 915 Մարտ 28։ Քաղաքական մթնոլորտը աւ ամպոտած էր։ Համիտ Պէյ Պօլսէն ետ կը կանչուէր ուրիշ պաշտօնի մը եւ իրեն տեղ կուսակալ կանուանուէր Մուսուլ գըտնուող կուսակալ արիւնարբու Տօքթ. Ռէշիտ Պէյը ծագումով չէրքէզ։ Բանակներուն մէջ գտնուած հայ զինուորներու ձեռքէն զէնքերն առնուած, ամբողջը լեռներու գլուխները ղրկուած էին իմալէ թապուոի։ Իրր թէ ճանապարհներ շինելու նպատակաւ 18-45 տարեկան հայ զինուորցուները որ Տիգրանակերտի հայութեան ուժը կը կազմէին. բոլորն աւ քաղաքէն հեռացուած էին։ Տօքթ. Զէրքէզ Ռէշիտ Պէյ, մէքթուպծի մը, իր պաշտօնին հասաւ 1915 Մարտ 28ին իւր հետ ունենալով Պէտրէտին Պէյ, իր ժանտարմայ քօմանտանի Զէրքէզ Ռուշտի Պէյ եւ եավէր մը, Զէրքէզ Շաքիր Պէյ անուամբ։ Ասոնցմէ զատ ան հետը բերած էր 4-50 չէրքէզ չէթէներ որոնք ժանտարմայի տարազով հազնուած էին։ Ասոնք բոլորն աւ հայկ. բնաջնջման հաւատարիմ գործիքներ էին։

95ի հայկական ջարդերուն, Տիգրանակերտի կոտորածի առաջին կազմակերպիչ տիրահռչակ Փիրինչի Զատէ Արիֆ իֆէնտիի որդին Ֆէյզի Պէյը որ Պօլիս կը գտնուէր իրր Տ-կերտի երեսփոխան, իորհրդարանը գոցուելուն Տիգրանակերտ վերդարձած էր։

Ֆէյզի Պէյն էր որ վլանը պիտի գծէր Տիգրանակերտի հայկական բնաջնջման։ Ինքը կուսակալ թէշիտ, մէքթուպչի Պէտրէտտին, ժանտ. գոմանտանի Ռիւշտի Պէյերը գլուխ գլխի տուած գիշեր ցորեկ աշխատելով, շինեցին բնաջնջման ծրագիրը եւ ի գործ դրին սապէս.-

Առաջին գործն եղաւ Ֆէյզիին Ատանա գտնուած գոմսէր սրիկայ Մէմտուհը Ատանայէն Տիգրանակերտ բերելը, որուն պէտք ունէր Ֆէյզի Պէյը իր աւերումի աննման գործիք։ 1915 Մայիս 13ի Ուրբաթ օրը գիշերանց պաշարուեցաւ հայոց թաղերը։ Արշալոյսին տանիքներն ու փողոցները լեցուածէին ժանտարմէներով, չէրքէզներով, փոլիսներով եւ գանուններով։ Բոնի ոյժով մտան տուները, փախստական զինուորի անուան տակ ձերբակալեցին 300 երիտասարդներ։ Հակառակ զինուորական օրէնքին փոխանակ բռնուածներն ախսէսրէր մասնաճիւղը զրկուելու, շիփի շիտակ կեղրոնական բանտ տարուեցան։ 1915 Ապրիլ 19ին երկուշաբթի առաւտուն սկսաւ ազգային վարիչ մարմիններու ձերբակալութիւնը, անհիմն հարցաքննութեան մը ենթարկելէ վերջ, ասոնք եւս կեղրոնական բանտ առաջնորդուեցան։ Ազգային շրջանակէն չի ձերբակալուած մնաց միայն Մկրտիչ Վարդ։ Զլղատեան։ Առաջնորդ։ Փոխանորդը։ Ֆէյզի Պէյ Ապրիլ 6ի օրը ձիզրէ կը մեկնէր, անկէ վերադարձին քիւրտ Աշայիրներուն պիտի այցելէր խիստ կարեւոր դժոխային կարգադրութիւններու համար, կարգադրութիւններ որ Ֆէյզի Պէյէն զատ, նոյնիսկ իսլամներու մարդարէն եթէ երկինքէն իջնէր, դարձեալ խօսքը լսելի

չպիտի ըլլար քիւրտ աշայիրներուն, ինչու որ քիւրտերը կը պաշտէին ու կը հնազանդէին ֆէյզի Պէյին:

Ապրիլ 24ին Զորեքշաբթի օրը ձերբակալուեցան հայ կուսակցականները եւ ահոելի ծեծերու ու ամենածանր տանջանքներու ենթարկուեցան։ Ծեծի տակ մէկ գիշերուայ մէջ մեռան շատեր, որոնց մէջ կային Տ. Աշոտ քահանան, Միհրան Պասթաճեանը, Կիրակոս Յովհանէսեանը, Միսաք Շիրիկճեանը, մսագործ Վահանը, Տիգրան Զաղըճեանը եւ այլն։ Մայիս 7ին կուսակալութեան ազդարարութեամբ բոնի միջոցներով հաւաքեցին հայերու զէնքերը։

Ապրիլի վերջին օրերն էր կազմուեցաւ Միլիս թափուրի մը որու կազմը յանձնուած էր ամիս մը առաջ ֆէյզի Պէյին, իթթիհատի գոմիթէին, արիւնարբու մի միրալէյի, մի հազարապետի, եւ 10 գազան հարիւրապետներու, որոնց անուններն տեղեկագրիս վերջը նշանակուած է։

Հարիւրապետներուն ձգուած էր արձանագրել նպատակին յարմար ոճրագործ չափուչներ, եւ չափուչներուն թողուած էր արձանագրել գործին յարմար, առնուազն կենաց օրերուն մէջ 4-5 մարդ ըսպանող զանազան քիւրտեր։ Միլիս թափուրին առաջին միրալայէն մինչեւ յետին նէֆէրը մարդասպան գայլեր էին։

1915 Մայիս 1ին ձերբակալուեցան քաղաքին բոլոր կարեւոր դէմքերը եւ լեցուեցան միւսաֆըրհանէներ։ Հազիւ հազ 40-50 անձ բնակելիք շէնքի մը մէջ լեցուցին 300-350 անձ։ Հաղորդակցութենէ որկուած, աղտեղութեան եւ գարշահոտութեան մէջ ինեղճ տառապեալները օրը տասն անգամ մահ կը

փնտոէին, նեղութենէն, ծեծէն, նամանաւանդ
դարշահոտութենէն ազատելու համար:

Ֆէյզի Պէյ Ճիզրէէն վերադարձին այցելեց շատ
մը աշայիրներու բրօպականտելով քիւրտ տարրը
կեավուրները ջարդելու համար: Գնաց Ռէմման
աշայիրին մէջ Լշքաֆթէն գիւղը Փիրիխան Խաթու-
նին տունը: Փիրիխանի որդին Ամարօն, որ իր ոճ-
ռագործութիւններուն համար կառավարութենէն
Հէյյէթէն Մէյիթէն հետապնդուելուն՝ փախստական
կը գտնուէր: Փէրիխան բերել կուտայ Ամարօն, որ
կ'ելնէ Ֆէյզի Պէյի ներկայութեան, որմէ կ'աւետուի
Ամարօի թէ, իր գործած բոլոր յանցանքներուն հա-
մար կայսերական ներում չնորհուած է. Եւ կը պատ-
ուիրէ Ֆէյզի Պէյը Ամարօին թէ մօտ օրէն զինք
Տիգրանակերտ ուղելուն, առանց վայրկեան կոր-
ունցնելու անմիջական քաղաք իջնէ ՚իրեն կարգ մը
հրահանգներ սլիտի տրուի կեավուրները ջարդելու
համար:

Ֆէյզի Պէյ Մայիսի սկիզբը Տիգրանակերտ վե-
րադարձաւ եւ ըստ իր հրահանգին ամէն գործ կար-
գի գտաւ: Բոլոր հայ երիտասարդութիւնը մօտաւո-
րապէս 10,000 անձ քաղաքէն 20-25 ժամ հեռուները
դրկուած էին: Ազգային ժողովականները, կուսակ-
ցականները, կարեւոր անձնաւորութիւնները, ամ-
բողջն ալ զնտաններու մէջ էին նետուած: Զարդերու
տուամը պատրաստուած վարագոյրը բացուելու վը-
րայ էր. Ֆէյզի Պէյի կըսպասէին, որն եւս հասաւ:

Քաղաքին գաւառները իրենց գիւղերովը միա-
սին, քիւրտ աշայիրներու եւ տեղւոյն կառավարու-
թեան ուժերով, տարագրութեան պատրուակաւ

ճամբայ հանուած մօտակայ ձորերու մէջ սպան-նուած, լմնցած էին եւ գեղադէմ հարս ու աղջիկ-ները առեւանդուած էին: Քաղաքին մօտակայ գիւ-ղերը ամէն գիշեր նորակազմ միլիս թապուոին եր-թալով 4-5 գիւղ կ'ոչնչացնէր սպաննելով եւ թալա-նելով ամէն ինչ:

Կարգը հասած էր քաղաքին հայութեան ոչըն-չացման: Ֆէյզի եւ Ռէշիտ Պէյերը արիւնաբերան կտրած 3 գիշեր Ուլու ծամիին մէջ կը բանախօսէին կեավուրներու ջարդին համար, եւ գէշ կերպով կը պատուիրէին թուրք հասարակութեան թէ, ոչ ոք մէկ հայ երեխայ անդամ չի պիտի պահէր, ով որ հայ մը պահէր՝ մահուան պիտի ենթարկուէր: Այս օրերուն, իթթիհատի գոմիթէն նախագահութեամբ ֆէյզի Պէյին մեծ ժողով մը կը դումարէ, որուն ներկայ կը գտնուին, բոլոր առաջնակարգ էշէֆ-ները, իթթիհատները, նազիպ-էլ-րէֆ, նոյնիսկ մուֆթին: Օրակարգն էր հայերու ջարդի խնդիրը: Կը վիճին թէ բոլո՞ր հայերը սրէ անցնելու է թէ պղտիկներուն խնայելու է: Մեծամասնութեամբ կ'որոշեն որ օրօրոցի մանուկներն անդամ ջարդելու է, մինակ մուֆթին շատ կը պնդէ թէ մինչեւ 12 տարեկաններուն խնայել եւ ղանոնք խոլամացնելու է, սակայն անլսելի կ'ըլլայ, որովհետեւ ամբողջ ժողովը ֆէյզի Պէյի բերանը կը նայէր, որ ամբողջ ոյժով կը պնդէ թէ օրօրոցի մանուկներն անդամ պիտի ոչնչացուին: Ժողովը միաձայնութեամբ ո-րոշում կուտայ հայոց բնաջնջման, որոշումը կը տորագրեն ամբողջն ալ եւ գրութիւնը կը յանձնեն կուսակալ Ռէշիտ Պէյին:



Որբանոցի սաներ 1895-ի կոտորածեն վերջ . Տեսուչ Պրեմ . Պետրոս Մրապեան

ՊԵՂՎԱՆՈՒ ԶՈՐԻՆ ՄԵՋ

Եկած էր ժամանակը Փէրիխանի որդին Ամարօն Տիգրանակերտ կանչելու։ Ֆէյզի Պէյի հրամանին վրայ Ամարօ անմիջական քաղաք իջած էր, իւր չաքմաքլիով, լայն շալվարովը, կնտոյի ապա վերարկույովը և կէս մէթր բարձրութեամբ բրդէ շինուած քիւլահովը։ Կատարեալ լեռան արջ մըն էր։ Հէյէրէն Միյէքէն կառավարութեան կողմանէ խստիւ հետապնդուած գաղանն, այսօր միեւնոյն կառավարութեան ժանտարմէ գոմանտանին հետ կառքին մէջ նստած կուսակալին այցելութեան կ'երթար։

Կուսակալը սիրով կ'ընդունի Ամարօն։ Ներկայ կը գտնուի Ֆէյզի Պէյը։ Երկու պէյերու կողմանէ Ամարօի կը հրահանգուի սապէս։ Զաւակս, Ամարօ մի քանի օրէն 6-700 հայեր, մեր եավէր Զէրքէզ Շաքիր Պէյի հրամանատարութեան տակ, Մուսուլ աքսորուելու պատրուակաւ պիտի հասնին ձեր Բշկէֆթէն գիւղն, այնտեղ եավէր Շաքիր Պէյին հըրահանգին համաձայն ամբողջ աշայիրովդ պիտի ոչնչացնէք զանոնք, առանց մէկ հայու մը խնայելու, եւ եթէ իմանամք մէկ հայ ազատած էք՝ պատասխանատու էք, գիտցած եղիք։ Ամարօ կուսակալի եւ Ֆէյզի Պէյի հրամանն ընդունելով յաջորդ օրը մեկնեցաւ Լաստով գէպի Բշկէֆթան, Թէքէլիֆ հարպիյէյի կողմէն երկու կառք պարան տրուեցաւ իրեն, որ իրեն հետ միասին տարաւ Բշկէֆթան։ 1915 Մայիս 27ին կրկին անդամ պաշարեցին հայոց թա-

ղերը : Միլիոններու կողմէ խուզարկութեան ենթարկուեցան տունները : Նոյն օրը ձերբակալեցին նաեւ 100է աւելի անձեր :

Ամբողջ բանտարկեալներուն թիւը հասած էր 970 - 980 անձի : Կուսակալը քննիչ յանձնախումբ մը կազմեց Ֆէյզի Պէյի նախագահութեան տակ, որոնք պարապեցան միայն մէկ օր, իրենց ներկայութեան հանելով բոլոր ձերբակալուածները : Ֆէյզի պէյ աչքէ կ'անցներ զանոնք մի առ մի հարցնելով անուն, մականուն, նշանակելով կարեւորագոյներու անունները տոմարի մը մէջ թուով 635 :

1915 Մայիս 28ին Ռւբրաթ օրը ձերբակալեցին Առաջ. փոխանորդ Մկրտիչ Վրդ. Զլղատեանը. Եւ դրին կեղրոնական բանտի վերնայարկը, զատէն սենեակի մը մէջ, հաղորդակցութենէ զրկուած :

Յաջորդ օրը բանտարկեալներուն ազդարարուեցաւ որ Մուսուլ պիտի աքսորուին : Մայիս 30ին Կիրակի օրը արշալոյսին, շինուած ցանկին համաձայն բանտէն հանեցին այդ 635 անձերը, որոնք քաղաքին հայութեան լաւագոյններէն էին, կը շրջապատեն զիրենք ամբողջ միլիս թապուոիի եւ չէրքէզներու ուժերով, աքսորականներու մէջն ըլլալով նաեւ Զլղատեան վարդապետը : Կ'առաջնորդեն զիրենք գէպի Տիգրիս գետը, ուր կամուրջին տակ 13 լաստ կըսպասէր պատրաստ . կը տեղաւորեն աքսորականները լաստերուն վրայ շրջապատուած միլիս եւ չէրքէզ ուժերով . եավէր Զէրքէզ Շաքիրի հրամանատարութեան տակ . լաստերը կ'արձակեն Տիգրիս գետին վրայ, ճամբորդութիւնը կըսկսի : Սակայն Զլղատեան վարդապետը հեռաձայնով Մարտին Գա-

փուէն ետ վերադարձուցին եւ նորէն բանտ դրին . նոյն գիշերը խեղճ կղերականը բանտէն հանելով փողոցներուն մէջ թմբկաւոր ամբոխով մը , իրը արջ երեսին մուր քսելով , վիզը զանգակներ կախելով . գլուխը պախուրծ անցնելով , կը խայտառակեն հոգեւորականն անվայել ընթացքներու մէջ :


Փողոցները շրջան ընելէ վերջ . կը բերեն զինք կառավարութեան շէնքին կից ճամիին բակը . թըմբուկաւոր շէխերն թմբուկները զարնելով , կազ կը սրսկեն Զլղատեանի մօրուքին եւ կուրծքին . լուցկին տալով կրակը կը բռնկի . խղճալի վարդապետը կը կըսի ցատկոտել . շէխերն իրենց ցանկութիւնը կը հազեցնեն . կիսամեռ վիճակի մէջ ջուր կը լեցնեն մարելով կրակը , խելակորոյս վիճակի մէջ կը վերցնեն զինք նետելով բանտին հիւանդանոցին մէկ ախոռը , երկու միլիս հոն դնելով . յետոյ փայտի հարուածներու տակ կը վերջացնեն Զլղատեանի կեանքը :

Լաստերը Յունիս 19ի օրը , դեռ Փէրէխանի Բշքֆթան գիւղը չը հասած , Ամարօին լուր հասած էր որ կը մօտենան աքսորականները : Ամարօ քանի մը քուրտերով հեռուէն երկու հրացան կ'արձակէ . առաջին սրացող լաստին վրայ նստած աքսորականներէն երկու մարդ վիրաւորելով : Եավէր Շաքիր հրաման կուտայ միլիսներուն որ ցամաք ելնեն եւ էշքիաններն հալածեն . միլիս եւ չէրքէզներէն մաս մը ցամաք ելնելով կը հետապնդեն քիւրտերը , որոնք քիչ վերջ վերադառնալով կըսեն որ երեք քիւրտ ըսպաննեցինք , միւսները փախուստ տուին : Եավէր Շաքիրն իւր նստած լաստին մէջ առած էր երես-

փոխան Զրածեան, Գաղէզեան, Ապտիւլ-Մէսիչ, Տիրան Էֆէնտիներն եւ ուրիշ շատ մը բարձր Դիրքի տէր հայեր, որոնց կըսէ որ ճանապարհը վտանգաւոր կը տեսնեմ, խօսեցէք աքսորականներուն որ իրենց վրայ գտնուած դրամները բերեն ձեզ. ահաւասիկ պայուսակ մը, լեցուցէք մէջը, իւրաքանչիւրի անունն եւ յանձնած դրամը նշանակեցէք, դրամները թող մնայ այս լաստին վրայ ,արդէն ուժի մեծ մասը այս լաստին պիտի յատկացնեմ : Այս վտանգաւոր վայրէն անցնելնուս պէս. իւրաքանչիւրի դրամն իրեն թող յանձնուի նորէն : Եավէրի հրամանին համաձայն կը հաւաքեն դրամները լման 6000 (վեց հազար) դեղին ոսկի կը յանձնեն իրեն :

Լաստերն կը շարունակեն ճանապարհը, մէկը միւսէն քիչ հեռաւորութեամբ, կը հասնին Ըշկէֆթան գիւղը, Եավէրը կը յայտարարէ որ պարտաւորուած է ջուրի ճամբորդութիւնը ձգել եւ ցամաքի ճամբով ընթանալ, պատճառ բռնելով քրտական մեծ հրոսախումբ մը, որ պիտի յարձակի վրանին, ատոնց դիմադրելու չափ ուժ չունենալուն որոշած է ճանապարհը փոխել : Եավէրը կըսէ որ այս գիւղը հիւր պիտի մնաք այս Ըշկէֆթան գիւղը :

Առաջին լաստին վրայ գտնուած աքսորականները ցամաք կը հանեն, վեցական մարդ կը զատեն, իբր թէ գիւղին մէջ ամէն մէկ տան վեց մարդ հիւր պիտի տան, կ'առնեն վեց մարդերը, կ'առաջնորդեն գիւղ . այն տեղ ձեռքերնին կը կապեն այն պարաներով որ Ամարօ Թէքէլիֆէն բերած էր : Կապեալները կը տանին գիւղէն հեռի Պէզվանու ձորը : Երկու վայրկեան վերջը ուրիշ վեց հայ կապեալ կը հաս-



Արգեվուսակիում վյումութեան հողակցուառաւ լ



ցնեն ձորը : Այսպէս շարունակելով, յաջորդաբար 635 հայերը կապուած կը լեցնեն որոշուած սպանդանոցը :

Չորի բարձունքները եւ բերանը բռնուած էր ամբողջ Բէմման աշխրէթովն Ամարօյի հրամանատարութեան տակ . միլիս եւ չէրքէզ զօրքերով, եավէրի եւ միլիսի հարիւրապետներու հրամանին տակ :

Ալ կրնաք երեւակայել օրհասական սրտապատառ տեսարանը, աղմուկն ու վայնասունը : Ոմանք արտասուելով, ոմանք անարգելով, ոմանք աղերսելով, ոմանք հայհոյելով, ոմանք Աստուած կանչելով, ոմանք Աստուած ուրանալով, օդնութիւն կը պոռան, երկինք կը դլրդացնեն, բայց ի զուր :

Վերջապէս եավէրն ու միլիսի հարիւրապետներն իրենց սուրերն վար առնելով, նշան կուտան կրակի, երկու ժամ ամբողջ, հրացանաձղութիւն կ'ըլլայ միլիսներու, չէրքէզներու եւ Ամարօյի աշխրէթի կողմանէ : Չորը խոր լոռութեան կը մատնուի, ամբողջին դիակները գետին փոռուած, արիւնի գետակը միայն ձորէն կը վազէ, եավէր կը հրամայէ որ Միլիս եւ Չէրքէզները իջնեն ձորը, քննեն դիակները, տակաւին դիակներուն մէջ շունչ ունեցողներ եթէ կան՝ լմնցնեն : Միլիս եւ չէրքէզները վար իջնելով դեռ շունչ ունեցողներուն գլուխները կտրելով կը վերջացնեն :

1915 Յունիս 19ի Երեքշաբթի օրը, արևմուտին, Տիգրանակերտի հայութեան կարեւորագոյն, կարող, հարուստ, քաղաքին պարծանքն եղող անհատներու արեւն խաղառ խաւարեցաւ, իրենց գերեզման

ըլլալով Պէղվանու ձորն : Անոնց դիակները շուներու եւ դիշատիչ թռչուններու կեր եղան :

Զի մոռնանք յիշել որ իժի ծնունդ Ֆէյզի եւ Բէշիտ Պէյերը 8-10 օր վերջ Ամարօն կրկին Տիգրանակերտ հրաւիրեցին , յանձնարարելով իրեն որ յառաջանայ դէպի Ամպար գետակը , իբր թէ այն տեղ 4-5 հայ յեղափոխականներ կան բռնելու կամ հակառակ պարագային սպաննելու համար : Ֆէյզին եւ կուսակալն Ամարօին հետ դրին 10 հատի չափ չէրքէզներ իբր օդնական ուժ : Ամպար գետակը չի հասած աղբիւրի մը մօտ , չէրքէզներու չավուշը կը խնդրէ որ մի քիչ հանգստանան եւ ապա շարունակեն ճանապարհը , Զէրքէղ Զավուշը , չէրքէզներուն աչքի նշան մ'ընելուն , անմիջապէս չէրքէզները բոլորն ալ իրենց հրացանի դնդակները կը տեղացնեն Ամարօյի մարմնոյն , որն անակնկալի բերելով գետին կը փոեն . այս ալ քաղաքական հեռատեսութիւն մ'էր , Ֆէյզի եւ Բէշիտ Պէյերը պէտք էր Ամարօն մէջտեղէն վերցնէին , որպէսզի ապագային Ամարօն աւելի կամ պակաս չի խօսէր :



Մէքթուպձի Պէտրէտտին եւ գոմսէր կավրանլի Զատէ Մէմտուհ Պէյերը Մարտին ղրկուեցան , մին կառավարիչ ու միւսը գոմսէր Մարտինի հայերը ջարդելու համար . Ֆէյզի եւ Բէշիտ Պէյերու կողմէ կը յանձնարարուէր կառավարիչ Պէտրէտտինին որ ամենէն առաջին գործն ընէ քանի մը խոշոր հորեր փորել տալ , որպէսզի Տիգրանակերտէն եւ Մարտինէն տարագրուելիք ընտանիքները դրկուին հո-

բերուն գլուխը, այն տեղ ջարդուելով դիակները
հորերը նետուին :

Պէտրէտտին առանց աշխատելու Բէսուլայնի
մօտերը հին ժամանակէն մնացած, պատրաստ խո-
չոր հորեր զտաւ, որոնք եղան Տիգրանակերտի եւ
Մարտինի հայութեան գերեզմանները :

Յունիս ամսոյ սկիզբներն էր որ ձեռնարկուե-
ցաւ Տիգրանակերտի հայ ընտանիքներու տարագը-
րութեան : Միլիս թապուոիի հազարապէտ Շէֆդի,
եւ ժանտարմէ գօմանտանի Բիւշտի Պէյերը, ամէն
օր ժամը 4-4½ ըլլալուն, քանի մը միլիսներով եւ
չէրքէզներով կը մտնէին հայ տուները, կ'արձա-
նագրէին տան անդամները, եւ պահակներ կը դնէին
տուները, արգիլելով տունեցիներուն դուրս ելնել,
գիշերով բռնի կը հանէին զիրենք իրենց տուներէն,
կը դրկէին Մարտին, անկից ալ Բէսուլայնի հորերու
գլուխը, այնտեղ ջարդելով ամենքը կը նետէին հո-
րերուն մէջ : Բիւշտի Պէյի եւ Շէֆդիի գործն այս
էր . ամէն օր միօրինակ 30-40 ընտանիք տարագրել:
Այս վիճակը շարունակուած է մինչեւ 1915ի Հոկ-
տեմբեր ամսոյն սկիզբները, մինչեւ որ Տիգրանա-
կերտի հայութիւնն իր շրջակայ դաւաներով ու
դաւառակներով միասին բնաջնջուեցաւ :

Տիգրանակերտի հայութեան անձի կորուստն է
35-36 ,000 · իսկ շրջակայից անձի կորուստն է մո-
տաւորապէս 40-45 ,000 :

Տարագրական ջարդերով Տիգրանակերտի հա-
յութեան բնաջնջման գլխաւոր կազմակերպիչներու
ցանկը յաջորդ էջին վրայ գրուած 28 անձերն են :

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԵՐԼ

1. Երեսվոխան Փիրինձի Զատէ Թէյզի Պէյ
2. Կուսակալ Զէրքէղ Տօքթ . Բէշիտ Պէյ
3. Երեսվոխան Զիլֆի Զատէ Պէյ
4. Մէքթուպձի Պէտրէտտին Պէյ
5. Ժանտէրմէ Գոմանտանի Զէրքէղ Ռիւշտի Պէյ
6. Կուսակալի Եավէր Զէրքէղ Շաքիր Պէյ
7. Փոլիս Միւտիւրի Զէրքէղ Ճէմիլ Էֆէնտի
8. Մէր Գոմսէր Արնավուտ Ռէսուլ
9. Գոմսէր Կավրանլի Զատէ Մէմտուհ Պէյ
10. Իթթիհատի պատասխ . տնօրէն Աթթար Հագգը
11. » Ճարճիս աղա Զատէ քոռ Եռւսուֆ
12. » Հէֆերէն Միւֆթի Զատէ Շէրիֆ Պէյ
13. » » Վելի պապա Զատէ Վէլի Պէյ
14. » » Զիլֆի Զատէ Ատիլ Պէյ

ՄԻԼԻՍ ԹԱՊՈՒԹԻ

15. Միլիսի Միրալայ Ճէմիլ փաշա Զատէ Մստաֆէ Պէյ
16. » Հազարապետ Եասին Էֆ . Զատէ Շէֆդի
17. » Հարիւրապետ Փիրինձի Զատէ Սըտդի
18. » » Յաղիլ Էֆ . որդին Էմին Պէյ
19. » » Շէխ-Զատէ Գատրի Պէյ
20. » » Զազէ-Զատէ Քոռ Սէյման
21. » » Մուսուլի Եահիէ Միւլլա Ռաֆօ
22. » » Մուխթար Զատէ Օթրազձի Սալէհ
23. » » Յաթիհ Փաշա թաղէն Հաճի Պագըր
24. » » Ալի Հօղօյի որդին Սալէհ
25. » » Մարտին Քավուլի Տիրէքճի Թահառ

26. Միլիսի հարիւրապետ իսթինաֆ քեաթիպի Աոլ-
տիւլ Գատրի որդի Քամալ
27. Գանուն Զապիթի Օսման էֆէնտի
28. » Զավուշի Մուսուլի Մէհմէտ Միլլա Ռաֆօ
Վերոզրեալ 28 թուրքերը իրենց ձեռքին տակ
ունէին ամբողջ միլիս թապուռի մը եւ 40-50 չերքէզ
չէթէներ :

Միլիս թապուռին ունէր 45-50 ոճրագործ չա-
վուշներ եւ չավուշներն իրենց ձեռքին տակ ունէին
400ի չափ մարդասպան, գազանաբարոյ քիւրտեր :

Ասոնց բոլորին անունները արձանագրուած կը
մնայ Միլիս թապուռիի տետրակին մէջ : Եթէ նոյն
իսկ տետրակը մէջտեղէն վերցուի, իսիստ հարցա-
քննութիւն մը բոլորին անուններն ալ երեւան կրնայ
բերել :

Բողոքականաց Վարժարանի աշակերտները



ԿՈՐՍՈՒԱԾ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՄՔԵՐՆ

(Հայ Ազգային Հոգեւոր Պետեր)

ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԶԼՂԱՏԵԱՆ, Առաջնորդական փոխանորդ Լուս. Հայոց.
ԱՆԴՐԻԱՆ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ԶԵԼԷՊԵԱՆ, Առաջնորդ
Հայ Կաթոլիկաց.

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, Վանահայր Առաքելոց Վան-
քին.

ՀԱՅ Եւ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿ տասնեւմէկ քահանաներ:
Տնօրէն Դպրոցի, Ուսուցիչ Եւ Ուսուցչուհի 30 մը-
տաւորականներ:

(Կառավարական Շրջանակ)

ՍՏԵՓԱՆ Էֆ. ԶՐԱՃԵԱՆ, Օսմ. Բարլամէնդի անդամ
ԽԱԶԱՏՈՒՐ Էֆ. ՏԻԳՐԱՆԵԱՆ, Մէճլիսի Տարայի
անդամ.

ՃՐՃԻՍ Էֆ. ԳԱԶԱԶԵԱՆ, Մէճլիսի Տարայի անդամ.
ՏԻԳՐԱՆ Էֆ. ԻԼՎԱՆԵԱՆ, Վիլայէթ Թէրձիմանի
ՍԱՄՈՒԷԼ Էֆ. ՀԻԼՄԻ, Վիլայէթի գրադիր (ազգաւ
Սուրբիանի)

ԿԱՐԱՊԵՏ Էֆ. ԶՐԱՃԵԱՆ, Հապապ դաւառի միւ-
տիւր.

ՅԱՐՈՒԹԻՒՆ Էֆ. ՄԻՆԱՍԵԱՆ, Տնօրէն Թղթատա-
րութեան.

ՓԻԼԻՊՈՍ Էֆ. ԱՐՓԻԱՐԵԱՆ, Տնօրէն Երկրագործ.
Պանքայի.

ՄԵԼՔՈՆ Էֆ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Երկրագործ. Տնօրէն.
ՅՈՎԱԿԻՓ Էֆ. ՀԱՅԻՄԵԱՆ, Օսմ. Պանդայի Քացա-
յիր.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ . ԳԱՍՏՊԵԱՆ , ԹՐԱՆԱ . Հիւպատոս-
սի թարգման :

ՊՈՂՈՍ ԷՖ . Թէմմոեան , քաղաքապետութ . անդամ .

ՄԻՍԱՔ ԷՖ . ՇիրիքձեԱՆ , » »

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ . ՄՈՒՐԱՏԵԱՆ , » »

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ . ԱԼԵԱՆԱԳ , » »

(ազգաւ Սուրիացի)

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ . ԽԱՆՏԱՆԵԱՆ , Պատժ . Ատեանի
անդամ .

ՏԻԳՐԱՆ ԷՖ . ՃԵՐՐԱՀԵԱՆ , Իրաւար . Ատեանի ան-
դամ .

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ . ՏԱՊՊԱՂԵԱՆ (Նաթըդ) , Փաստաբան

ԿԻՐԱԿՈՍ ԷՖ . ԵՆՈՎՔԵԱՆ , »

ՊՈՂՈՍ ԷՖ . ՏԵՐ ԴԱԲՐԻՔԼԵԱՆ , »

ԳԵՂՐԳ ԷՖ . ՔՕՋ-ՕՂԼԵԱՆ , »

ՏՕՔԹ . ԱՐԹԻՆ ՊԵՅ ՀԵԼՎԱՁԵԱՆ , Զին . Գայմա-
դամ Աէր Թապիպ .

ՏՕՔԹ . ՅՈՎՀԱՆՆԻՍ ԹԵՐՉԵԱՆ , Զին . ԲԺԻՇԿ Հար-
իւրապետ .

ՏՕՔԹ . ՆՇԱՆ ՊԱԳԱԼԵԱՆ , Զին . ԲԺԻՇԿ Հարիւրա-
պետ .

ՅԱԿՈԲ ՀԵՔԻՄԵԱՆ , Դեղագործ .

ԱՐԹԻՆ ԱՂԿԻԿԵԱՆ , »

ԱԻԵՏԻՍ ՊԱԼՄԱՆՈՒԿԵԱՆ , Ատամնաբոյժ , Վկայ-
եալ Թըպիյէյն .

Հողատեր , Սեղանառ , Վաճառական

ԳԱԶԱԶԵԱՆ ԵՂԲԱՅՐՔ ԵՒ ԵՂԲՈՐՈՐԴԻՔ .

ԹԾԻՓԱՆՁԵԱՆ ԵՂԲԱՐՔ ԵՒ ԵՂԲՈՐՈՐԴԻՔ .

ԵԿԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ ԵՒ ԵՂԲՈՐՈՐԴԻՔ .

ՄԵՆՏԻԼՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ .
ՊՈՅԱՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ .
ԳԱՐԱՆՑԻԼԵԱՆ ԵՂԲԱՐՔ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ .
ՇԻՐԻՔՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ .
ԽԱՆՏԱՆԵՎՆ ԵՂԲԱՐՔ .

ՄԵՏԱՖՍԻ Գործարանատերներ
ԱՊՏԱԼԵԱՆ ԵՂԲԱՐՔ .
ՄԿՐՏԻՉ ԹԵՐԵՔԻՃԵԱՆ .
ՄԱՐՏԻՐՈՍ ԱԹԹԱՐԵԱՆ .
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊՈՅԱՃԵԱՆ .
ՅԱԿՈԲ ՊԱԳԱԼԵԱՆ .
ՅԱԿՈԲ ԳԱԶԱՆՃԵԱՆ .

Առեւտրականներ

ՏԻԳՐԱՆԵԱՆ ԵՂԲ .
ԹՕՓԱԼԵԱՆ ԵՂԲ .
ԱՃԵՄԵԱՆ ԵՂԲ .
ՊԱՍԹԱՃԵԱՆ ԵՂԲ .
ԳՐԻԳՈՐԵԱՆ ԵՂԲ .
ԳԱԼԻՄՔԱՐԵԱՆ ԵՂԲ .
ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՂԲ .
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՈՍԿԵՐՁԵԱՆ
ՆԵՃԱՌԵԱՆ ԵՂԲ .
ԱՄՍԵՀ ՍԱՊՊԱՀ ԵՒ ՈՐԴԻՔ
ՊԵՏՐՈՍ ՀԱՔԻՄ (ՔԻԼՄԱՆԻ)
ԵՈՐԿԻ ԱՊԱՃԻ (ՅՈՒՆԻ)
ԵՈՒՍՈՒԹ ԳՈՍԹԻ (ՅՈՒՆԻ)

ՅԱՐՇԵԱՆ ԵՂԲ .
ՍՏԵՓԱՆ ՄԱԹՈՍԵԱՆ
ՏՕՆՃԵԱՆ - ԳԱԶԱԶԵԱՆ
ՊԱԶԻԿԵԱՆ ԵՂԲ .
ՔԱՐԻՊԵԱՆ ԵՂԲ .
ՅՈՎՍԻՓ ՇԻՐԻՔՃԵԱՆ
ԱՆՏՈՆԵԱՆ - ՊՆՏՈՒԿԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՈՍԿԵՐՁԵԱՆ
ԳԱԿՈԲԵԱՆ ԵՂԲ .

ԳԱՍՊԱՐԵԱՆ ԵՂԲ .

ՄԻՒԱՅՔՆ ՐՈՒՄԻ (Սուրիանի կաթոլիկ)
ՄՈՒՄՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ (Սուրիանի)
ՖԵԹՀՈՒԼԼԱՀ ՀԱՔԻՄ (Քիւտանի)
Տ. ՊՈՂՈՍԵԱՆ ԵՂԲԱՐՔ
ՍԵՐԾԱՑ ՎԱՍԻԼ (Յոյն), Եւայլն, Եւայլն:

Ս. Կիրակոսի Վարժարանի աշակերտները 1895-ի կոտորածէն առաջ. Ուսուցիչ Յովհաննէս Նանանեան



ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՊԱՏԱԿ

ՅՕԴ. 2.՝ Ընկերութեանս նպատակն է սատարել երկրի վերաշինութեան գործին :

ա) Աղետէ ազատուած կարօտ Տիգրանակերտցի հայերուն օդնել առանց տարիքի եւ սեռի խորութեան առլուստի անմիջական պէտքեր մատակարարելով, գործելու ի վիճակի եղողներուն գործ հայթայթելով, արհեստաւորներուն իրենց արհեստին վերաբերեալ գործիքներ տալով փոխարինաբար :

բ) Հետամուտ ըլլալով միջոցներ ստեղծել որպէսզի անապատներու մէջ ու թուրքերուն քով ապաստանած կամ առեւանգուած Տիգրանակերտցիներն ազատուին :

գ) Տիգրանակերտի կարօտ մատաղ սերունդը ինամել եւ դաստիարակել կամ իր սեպհական որբանոցին մէջ. եւ կամ գոյութիւն ունեցող նմանօրինակ հաստատութեան մը մէջ :

ՄԻԶՈՑՆԵՐ

ՅՕԴ. 3.՝ Ընկերութեանս հասոյթի ուղղակի միջոցներն են՝ մուտք, անդամավճարներ, եւ յօժարակամ նուերներ :

Յ0Դ. 4.— Ընկերութիւնս իր նիւթականը ապահովելու համար կը սարքէ հանդէսներ, խնջոյքներ, եւ տեղացիական հանգանակութիւններ՝ ի հարկին:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յ0Դ. 5.— Ընկերութեանս կրնայ անդամակցիւ ամէն Տիգրանակերտցի հայ, առանց սեռի խորութեան եթէ կը համակրի ընկերութեանս նպատակին:

Յ0Դ. 6.— Անդամական նուազագոյն մուտքն է մէկ տօլար եւ ամսական 25 սէնթ արանց համար, իսկ 50 սէնթ մուտք եւ 10 սէնթ ամսավճար տիկնանց համար:

Յ0Դ. 7.— Ամէն անոնք, որոնք կը վճարեն առնուազն տարեկան \$25·00 եւ կամ կ ընուիրեն մեծկակ գումար մը, ընկերութեանս պատուոյ անդամ կը ճանչցուին:



